ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2020 թվականի _____ №_____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ո ւ մ** է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020/2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը իրականացնել պահուստային տեղերի բաշխումը և բուհերին տրամադրված տեղերի շրջանակում՝ թափուր մնացած տեղերի վերաբաշխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
_____N _____ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ

Աղյուսակ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՇԽՈՒՄԸ

	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղեր
ԸՆԴԱՄԵՆԸ	**1373 (այդ թվում՝ 80 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)**
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**1099 (այդ թվում՝ 71 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)**
Հայ-ռուսական համալսարան	25
Հայաստանում ֆրանսիական համալսարան	3
Եվրոպական համալսարան	8
Հայաստանի ամերիկյան համալսարան	20 (այդ թվում՝ 3 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն	17 (այդ թվում՝ 3 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
ՀՀ պետական կառավարման ակադեմիա	41 (այդ թվում՝ 3 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)	3
Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Երևանի մասնաճյուղ	2
Արցախի Հանրապետություն	30
Պաշտպանության նախարարություն	83
ՀՀ ոստիկանություն	10
Միջպետական համաձայնագրերով ՀՀ պետական բուհեր ընդունված օտարերկրյա քաղաքացիներ	23
Պահուստային տեղ	9

Աղյուսակ 2

2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Բուհը, մասնագիտությունը		Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղեր
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ		303 (այդ թվում՝ 32 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
056101.00.7	Մաթեմատիկա	7
056201.00.7	Վիճակագրություն	2
056801.00.7	Մեխանիկա	3
056802.00.7	Ֆինանսական մաթեմատիկա	8
061101.00.7	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	10
061105.00.7	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	6
055101.00.7	Ֆիզիկա	10
055102.00.7	Ռադիոֆիզիկա	8
071401.00.7	Էլեկտրոնիկա	7
071403.00.7	Ռադիոտեխնիկա և կապ	3
053101.00.7	Քիմիա	3
091601.01.7	Ֆարմացիա	7
051101.00.7	Կենսաբանություն	3
051202.00.7	Կենսաֆիզիկա	2
051201.00.7	Կենսաքիմիա	3
054101.00.7	Երկրաբանություն	4
054201.00.7	Աշխարհագրություն	10
101801.00.7	Սերվիս	3
101501.00.7	Զբոսաշրջություն	2
061104.00.7	Տեղեկատվական համակարգեր	7
022201.00.7	Պատմություն	8
022202.00.7	Հնագիտություն	3
031501.00.7	Մշակութաբանություն	4
021801.00.7	Արվեստի տեսություն և պատմություն	3
022802.00.7	Կովկասագիտություն	5
022803.00.7	Հայագիտություն	3
031201.00.7	Քաղաքագիտություն	4
031801.00.7	Միջազգային հարաբերություններ	6
031101.00.7	Տնտեսագիտություն	6
041301.00.7	Կառավարում	9
041201.00.7	Ֆինանսներ	3
041101.00.7	Հաշվապահական հաշվառում և հարկում	2
022301.00.7	Փիլիսոփայություն	5
031301.00.7	Հոգեբանություն	5
092301.00.7	Սոցիալական աշխատանք	6
031401.00.7	Սոցիոլոգիա	4
031804.00.7	Հասարակայնության հետ կապեր	3
023101.00.7	Հայոց լեզու և գրականություն	12
011101.00.7	Կրթական գիտություններ	4
032101.00.7	Լրագրություն	5
023102.00.7	Օտար լեզու և գրականություն	12

023201.00.7	Լեզվաբանություն	23
022102.00.7	Աստվածաբանություն	6
042101.00.7	Իրավագիտություն	10
031803.00.7	Եվրոպագիտություն	3
022801.00.7	Արևելագիտություն	9
ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ		**11**
023101.00.7	Հայոց լեզու և գրականություն	1
031101.00.7	Տնտեսագիտություն	3
011101.00.7	Կրթական գիտություններ	3
061105.00.7	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	2
023102.00.7	Օտար լեզու և գրականություն	1
023201.00.7	Լեզվաբանություն	1
«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ		**206** (այդ թվում՝ 10 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
061101.00.7	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	11
071401.00.7	Էլեկտրոնիկա	17
071802.00.7	Արդյունաբերական ճարտարագիտություն	4
031101.00.7	Տնտեսագիտություն	6
061105.00.7	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	12
061901.00.7	Տեղեկատվական անվտանգություն	14
072401.00.7	Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում	3
071301.00.7	Էներգետիկա	21
041301.00.7	Կառավարում	5
071302.00.7	Էլեկտրատեխնիկա	8
071501.00.7	Մետալուրգիա	4
071503.00.7	Մեքենագիտություն	3
071502.00.7	Մեքենաշինություն և նյութերի մշակում	3
071601.00.7	Տրանսպորտային համակարգեր	5
071603.00.7	Ավիացիոն և հրթիռային տեխնիկա	3
071505.00.7	Տրանսպորտային մեքենաշինություն	4
071506.00.7	Սարքաշինություն և չափագիտություն	5
071403.00.7	Ռադիոտեխնիկա և կապ	13
071402.00.7	Ավտոմատացում	8
061102.00.7	Ծրագրային ճարտարագիտություն	22
061103.00.7	Համակարգչային ճարտարագիտություն	15
071101.00.7	Քիմիական տեխնոլոգիա	3
071201.00.7	Շրջակա միջավայրի պահպանություն	3
021201.00.7	Դիզայն	4
ՀԱՊՀ-ի Գյումրու մասնաճյուղ		**10**
031101.00.7	Տնտեսագիտություն	2
072301.00.7	Տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և արտադրանքների տեխնոլոգիա	1
073201.00.7	Շինարարություն	2
061105.00.7	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	4
071401.00.7	Էլեկտրոնիկա	1
ՀԱՊՀ-ի Վանաձորի մասնաճյուղ		**5**
031101.00.7	Տնտեսագիտություն	2
073201.00.7	Շինարարություն	3
«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ		**51** (այդ թվում՝ 4 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
073101.00.7	Ճարտարապետություն	8
073102.00.7	Քաղաքային տնտեսություն	3
073201.00.7	Շինարարություն	15
061101.00.7	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	4

061104.00.7	Տեղեկատվական համակարգեր	3
021201.00.7	Դիզայն	8
031101.00.7	Տնտեսագիտություն	2
071601.00.7	Տրանսպորտային համակարգեր	2
101501.00.7	Զբոսաշրջություն	2
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ		**95** (այդ թվում՝ 5 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
031101.00.7	Տնտեսագիտություն	21
041101.00.7	Հաշվապահական հաշվառում և հարկում	15
041201.00.7	Ֆինանսներ	23
041301.00.7	Կառավարում	18
041401.00.7	Շուկայագիտություն (մարքեթինգ)	11
056201.00.7	Վիճակագրություն	2
ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղ		**7** (այդ թվում՝ 1 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
041401.00.7	Շուկայագիտություն (մարքեթինգ)	1
041101.00.7	Հաշվապահական հաշվառում և հարկում	1
041201.00.7	Ֆինանսներ	2
041301.00.7	Կառավարում	2
«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ		**96** (այդ թվում՝ 3 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
011401.00.7	Մասնագիտական մանկավարժություն	42
031501.00.7	Մշակութաբանություն	2
021401.00.7	Կիրառական արվեստ	1
021801.00.7	Արվեստի տեսություն և պատմություն	2
092301.00.7	Սոցիալական աշխատանք	3
031301.00.7	Հոգեբանություն	9
011301.00.7	Ընդհանուր մանկավարժություն	10
031401.00.7	Սոցիոլոգիա	2
032101.00.7	Լրագրություն	2
021503.00.7	Թատերական արվեստ	2
032201.00.7	Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ	1
021101.00.7	Տեսալսողական արվեստ	2
041301.00.7	Կառավարում	1
011201.00.7	Նախադպրոցական մանկավարժություն	4
011302.00.7	Հատուկ մանկավարժություն	8
052101.00.7	Շրջակա միջավայրի գիտություններ	1
054201.00.7	Աշխարհագրություն	1
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ		**61** (այդ թվում՝ 2 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
031201.00.7	Քաղաքագիտություն	2
031801.00.7	Միջազգային հարաբերություններ	2
023201.00.7	Լեզվաբանություն	28
023102.00.7	Օտար լեզու և գրականություն	5
011401.00.7	Մասնագիտական մանկավարժություն	9
101801.00.7	Սերվիս	3
031803.00.7	Եվրոպագիտություն	2
032101.00.7	Լրագրություն	2
041301.00.7	Կառավարում	2
011101.00.7	Կրթական գիտություններ	2
031804.00.7	Հասարակայնության հետ կապեր	2

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ		**36**
011401.00.7	Մասնագիտական մանկավարժություն	18
031301.00.7	Հոգեբանություն	4
011301.00.7	Ընդհանուր մանկավարժություն	3
021401.00.7	Կիրառական արվեստ	1
061101.00.7	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	2
092301.00.7	Սոցիալական աշխատանք	3
041301.00.7	Կառավարում	2
101501.00.7	Զբոսաշրջություն	3
«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ		**19**
011401.00.7	Մասնագիտական մանկավարժություն	13
041301.00.7	Կառավարում	2
011101.00.7	Կրթական գիտություններ	4
«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ		**30** (այդ թվում՝ 1 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
021501.00.7	Երաժշտական արվեստ	2
021502.00.7	Կատարողական արվեստ	26
021801.00.7	Արվեստի տեսություն և պատմություն	1
ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղ		**3**
021502.00.7	Կատարողական արվեստ	2
021801.00.7	Արվեստի տեսություն և պատմություն	1
«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ		**15** (այդ թվում՝ 1 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
021101.00.7	Տեսալսողական արվեստ	1
021103.00.7	Կինոարվեստ	3
021301.00.7	Կերպարվեստ	1
021503.00.7	Թատերական արվեստ	4
021504.00.7	Պարարվեստի ռեժիսուրա	2
021801.00.7	Արվեստի տեսություն և պատմություն	3
ԵԹԿՊԻ-ի Գյումրու մասնաճյուղ		**1**
021503.00.7	Թատերական արվեստ	1
«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ		**14**
021201.00.7	Դիզայն	7
021301.00.7	Կերպարվեստ	4
021401.00.7	Կիրառական արվեստ	2
021801.00.7	Արվեստի տեսություն և պատմություն	1
ՀԳՊԱ-ի Գյումրու մասնաճյուղ		**2**
021301.00.7	Կերպարվեստ	2
«Գավառի պետական համալսարան» հիմնադրամ		**14** (այդ թվում՝ 2 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
011301.00.7	Ընդհանուր մանկավարժություն	3
041101.00.7	Հաշվապահական հաշվառում և հարկում	3
041201.00.7	Ֆինանսներ	3
061103.00.7	Համակարգչային ճարտարագիտություն	3
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ		**11** (այդ թվում՝ 2 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
091801.00.7	Հանրային առողջություն և առողջապահություն	5
091601.00.7	Ֆարմացիա	4

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ		**30** (այդ թվում՝ 3 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
011401.00.7	Մասնագիտական մանկավարժություն	15
101401.00.7	Սպորտ	10
032101.00.7	Լրագրություն	2
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ		**72** (այդ թվում՝ 5 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
031802.00.7	Ագրոէկոնոմիկա	4
041801.00.7	Ագրոբիզնես	4
052201.00.7	Բնապահպանություն և բնօգտագործում	2
071202.00.7	Կենսագործունեության անվտանգություն	2
071601.00.7	Տրանսպորտային համակարգեր	4
071602.00.7	Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	4
072101.00.7	Պարենամթերքի տեխնոլոգիա	21
073201.00.7	Շինարարություն	8
081101.00.7	Ագրոնոմիա	10
081102.00.7	Անասնաբուծություն	2
082101.00.7	Անտառային տնտեսություն	2
084101.00.7	Անասնաբուժություն	4
«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ		**7**
011401.00.7	Մասնագիտական մանկավարժություն	4
011301.00.7	Ընդհանուր մանկավարժություն	1
041301.00.7	Կառավարում	1
011101.00.7	Կրթական գիտություններ	1

2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Բուհը, մասնագիտությունը		Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղեր
Հայ-ռուսական համալսարան		**25**
«Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամ		**3**
041401.00.7	Շուկայագիտություն (մարքեթինգ)	1
041201.00.7	Ֆինանսներ	1
042101.00.7	Իրավագիտություն	1

Աղյուսակ 4

2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Բուհը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղեր
Հայաստանի ամերիկյան համալսարան	**20** (այդ թվում՝ 3 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
«Եվրոպական համալսարան» հիմնադրամ	**8**

Աղյուսակ 5

2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՇԽՈՒՄԸ

Բուհը, մասնագիտությունը		Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղեր
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ		17 (այդ թվում՝ 3 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)
061101.00.7	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	1
022801.00.7	Արևելագիտություն	1
041301.00.7	Կառավարում	1
041401.00.7	Շուկայագիտություն (մարքեթինգ)	1
041201.00.7	Ֆինանսներ	1
042101.00.7	Իրավագիտություն	1
071403.00.7	Ռադիոտեխնիկա և կապ	1
031301.00.7	Հոգեբանություն	1
031801.00.7	Միջազգային հարաբերություններ	1
052201.00.7	Բնապահպանություն և բնօգտագործում	1
052101.00.7	Շրջակա միջավայրի գիտություններ	1
051101.00.7	Կենսաբանություն	1
054101.00.7	Երկրաբանություն	1
022202.00.7	Հնագիտություն	1

Աղյուսակ 6

2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՇԽՈՒՄԸ

Բուհը, մասնագիտությունը		Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան		**30**
103101.00.7	Միավորումների և զորամասերի կառավարում	
ՀԱՊԿ անդամ երկրների ռազմաուսումնական հաստատություններ		**53**

Աղյուսակ 7

2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՇԽՈՒՄԸ

Բուհը Մասնագիտությունը		Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)
ՀՀ ոստիկանության կրթահամալիր		**10**
042101.00.7	Իրավագիտություն	**10**

Աղյուսակ 8

2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՇԽՈՒՄԸ

Բուհը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա	**41** (այդ թվում՝ 3 պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված)

Աղյուսակ 9

2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՇԽՈՒՄԸ

Բուհը Մասնագիտությունը		Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղեր
Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)		**3**
055101.00.7	Ֆիզիկա	3

Աղյուսակ 10

2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՇԽՈՒՄԸ

Բուհը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղեր
Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Երևանի մասնաճյուղ	**2**

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020/2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1.	**Անհրաժեշտությունը**
	Կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջներից:
2.	**Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**
	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը ձևավորվել են 2014 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՀ կառավարության հմ. 1191-Ն որոշմամբ հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկին համապատասխան: 2020-2021 ուստարվա պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերն՝ ըստ մասնագիտությունների ձևավորելիս հաշվի են առնվել շահագրգիռ կազմակերպությունների և բուհերի կողմից ներկայացված հայտերը: Նախապատվությունը տրվել է՝ ճարտարագիտության, արդյունաբերության և տեխնոլոգիայի, ճարտարապետության և շինարարության, համակարգչային, ֆիզիկական գիտությունների, կենսաբանական գիտությունների, գյուղատնտեսական գիտությունների և մաթեմատիկայի ոլորտների մասնագիտություններին և կրթական ծրագրերին: Ընդհանուր առմամբ 2020/2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությանը կհատկացվի 1373 տեղ, որից մրցութային կարգով 80 տեղ կհատկացվի պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (ԲՋ) դիմորդներին:
3.	**Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականություն**
4.	Նախագծի ընդունումը նպատակ ունի կանոնակարգել ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայի ընդունելությունը: Մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության կազմակերպումը հետապնդում է երկու նպատակ՝ 1. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նեղ մասնագիտական գիտելիքներով մասնագետների պատրաստում, որոնք ուսումն ավարտելուց

	հետո հիմնարար գիտելիքներով աշխատանքի կանցնեն համապատասխան ոլորտում. 2. Լայն մտահորիզոն ունեցող մասնագետների պատրաստում, որոնք հետագայում իրենց կրթությունը կշարունակեն ավելի բարձր կրթական աստիճանում՝ ասպիրանտուրայում: Ըստ բուհերի ընդունելության տեղերը ձևավորելիս հաշվի են առնվել համապատասխան մասնագիտությունների գծով աշխատաշուկայում առկա պահանջարկը, բակալավրիատի բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտների թիվը, ինչպես նաև լիցենզիայով բուհերին հատկացված տեղերի քանակը: Նախագծով նախատեսված են պահուստային տեղեր, որոնք կհատկացվեն ընդունելության մրցույթի արդյունքում հավասար միավորներ (ՄՈԳ) ունեցող, ինչպես նաև Ազգային բանակից զորացրված (ԲԶ) դիմորդներին: Պահուստային տեղերի բաշխումը կիրականացվի ընդունելության մրցույթի անցկացմանը զուգընթաց և մինչև ուսումնական տարվա սկիզբը դրանք կհատկացվեն բուհերին: Ընդունելության տեղերը ձևավորելիս հաշվի է առնվել նաև ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված Կառավարության ծրագիրը, համաձայն որի՝ պետության համար առաջնային և կարևորություն ունեցող ոլորտները կապահովվեն համապատասխան որակավորման մասնագետներով: Մասնավորապես տեղեր կհատկացվեն տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղեկատվական անվտանգության, ծրագրային ճարտարագիտության, զբոսաշրջության, լոգիստիկայի, ավիացիոն և հրթիռային տեխնիկայի, բնագիտության, տվյալագիտության, ագրարային, շուկայագիտության (մարքեթինգի) և հայագիտության մասնագիտություններին: Բարձրագույն կրթության քաղաքականության թիրախային խնդիրներից են ուսանողների համար հասանելիության և մատչելիության ապահովումը, ուսանողների ընդհանուր թվակազմում ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների թվաքանակի ավելացումը: Նախագծում ընդունելության տեղերը ձևավորելիս սոցիալական խմբերը չեն ներառվել, քանի որ պետության կողմից ուսանողների ուսման վարձի փոխհատուցման հարցերը կարգավորվում են 2006 թ. հուլիսի 27-ի ՀՀ կառավարության հմ. 1183-Ն որոշմամբ: Մագիստրոսի կրթական ծրագրով կրթությունը շարունակում են բակալավրիատի բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտները, ուստի բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության համամասնական շարունակականությունն ապահովելու նպատակով մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության 40 տեղ (նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ) հատկացվել է բակալավրի կրթական ծրագրով ընդունելությանը:
5.	**Կարգավորման նպատակը և բնույթը**
	Նախագծի ընդունման նպատակն է կանոնակարգել իրավական դաշտը տվյալ բնագավառում, մասնավորապես մագիստրոսի կրթական ծրագրով տեղերի ընդունելութունը կազմակերպել աշխատաշուկայի պահանջների

	համապատասխան, ինչպես նաև պատրաստել լայն մտահորիզոն ունեցող մասնագետներ, որոնք հետագայում իրենց կրթությունը կշարունակեն ավելի բարձր կրթական աստիճանում՝ ասպիրանտուրայում:
6.	**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտներն ու անձինք**
	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններ, Արցախի Հանրապետություն, Պաշտպանության նախարարություն, ՀՀ ոստիկանությունը:
7.	**Ակնկալվող արդյունքը**
	Նախագծի ընդունմամբ կապահովվի բարձրագույն կրթության շարունակականությունը և բարձր որակավորմամբ կադրերի պատրաստումը՝ ըստ կրթական ծրագրերի: Այն կնպաստի պետության համար առաջնային ու կարևորություն ներկայացնող բնագավառների համար մասնագետների պատրաստմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020/2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված Փոփոխությունները
ՀՀ ոստիկանության ս/թ մարտի 10-ի հմ. 1/9/8859-20 գրություն	Նախագծի վերաբերյալ առարկություն և առաջարկություն չունի	-	Նախագիծը մնացել է անփոփոխ
Առողջապահության նախարարության ս/թ մարտի 10-ի հմ. ԱԹ-05-4447-2020 05/3574-19 գրություն	Նախագծի վերաբերյալ դիտողություն և առաջարկություն չունի	-	Նախագիծը մնացել է անփոփոխ
Շրջակա միջավայրի նախարարության ս/թ մարտի 13-ի հմ. 1/07.2/2228-2020 գրություն	Նախագծի հավելված N 2-ի աղյուսակում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ բաժինը լրացնել նոր՝ «Էկոլոգիա» մասնագիտությամբ -3 անվճար տեղ, իսկ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ բաժինը՝ «Բնօգտագործման տնտեսագիտություն» մասնագիտությամբ - 3 անվճար տեղ»: Առաջարկը պայմանավորված է հանրապետությունում էկոլոգիական խնդիրների առկայությամբ և բնապահպանության բնագավառի մասնագետների սղությամբ, իսկ երկրին բնապահպան մասնագետներով պետք է ապահովեն Հայաստանի Հանրապետության առաջատար բուհերը:	Նախագծով Երևանի պետական համալսարանի «051101.00.7 Կենսաբանություն» մասնագիտությանը հատկացվել է 3 անվճար տեղ, որում ներառված է նաև «051101.06.7–էկոլոգիա և կենսառեսուրսների կառավարում» կրթական ծրագիրը: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «031101.00.7 Տնտեսագիտություն» մասնագիտությանը հատկացվել է 22 տեղ, որում ներառված է նաև «031101.05.7 Բնօգտագործման տնտեսագիտություն» կրթական ծրագիրը:	Նախագիծը մնացել է անփոփոխ
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ս/թ մարտի 11-ի հմ.	1. Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված պաշտոնական տվյալների համաձայն 2010-2018 թվականներին անվճար մագիստրոսի	1. 2019-2020 ուստարում մագիստրոսի կրթական ծրագրի դիմորդներին հատկացվել էր 1355 անվճար տեղ: Համաձայն	Նախագիծը մնացել է անփոփոխ

ԶԲ//7103-2020 գրություն	կրթական ծրագրով ընդունվածների թվաքանակը նվազել է տարեկան միջինը 0.8%-ով: Առաջարկվող նախագծով 2020/2021 թվականին սահմանելով 1,373 տեղ, այս նվազման միտումը շարունակվում է: Առաջարկում ենք, այս կամ հաջորդ ուսումնական տարում դիտարկել անվճար տեղերի ավելացում, ինչպես նաև պետության կողմից սահմանված զեղչերի ինստիտուտին որպես լրացում, ներդնել նաև պետության կողմից մասնակի անվճար տեղերի տրամադրման նոր ծրագրեր՝ կախված ոչ միայն առաջադիմությունից, այլ ամրագրելով համաֆինանսավորման գործոնի որոշարկման բազմագործոն կրեդիտային համակարգ:	վիճակագրական տվյալների որոշ բուհերում մագիստրոսի կրթական ծրագրով դիմորդներին հատկացվող տեղերի քանակը գերազանցում է բակալավրի տվյալ տարվա անվճար համակարգի գերազանց առաջադիմությամբ շրջանավարտների թվին: Ուստի Կրթության շարունակականու-թյան, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրե-րով սովորողների միջև համամասնությունը պահպա-նելու նպատակով յուրաքանչյուր տարի մագիստրոսի կրթական ծրագրից որոշակի տեղեր հատկացվում են բակալավրի կրթական ծրագրով դիմորդներին: 2020-2021 ուսումնական տարում նախատեսված է մագիստրոսի կրթական ծրագրից 40 անվճար տեղ հատկացնել բակալավրի կրթական ծրագրի դիմորդներին:	
	Կարծում ենք պետության կողմից ուսման վարձի ֆինանսավորմամբ կրթության խթանումը զարգացող տնտեսության համար անհրաժեշտ թվով բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման տեսանկյունից ռազմավարական ու երկարաժամկետ ծրագիր է:	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» Օրենքի ընդունմամբ կսահմանվեն ֆինանսավորման պետական աջակցության տրամադրման նոր մեխանիզմներ և սկզբունքներ:	Նախագիծը մնացել է անփոփոխ
	2.Ներկայացվել է 2019 թ. աշխատաշուկայում գործատուների շրջանում իրականացված հետազոտության արդյունքներով արձանագրված բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների պահանջարկը՝ ըստ 16 ոլորտների (Կրթության բնագավառ, Տնտեսագիտություն, Կառավարում, ֆինանսներ, Գյուղատնտեսություն, Դիզայներական գործ, Տեղեկատվական տեխնոլոգիաներ, Իրավագիտություն, Ճարտարագիտություն, Մշակույթ, Սպասարկման ոլորտ, Անվտանգության ապահովում, Զբոսաշրջություն, Լրագրություն Մարդկային ռեսուրսների կառավարում): Առաջարկվում է որպես առաջին մոտարկում, հաշվի առնել ըստ ուղղությունների մագիստրոսների համար	2. Ներկայացնում եմ Նախագծով հատկացված տեղերի քանակը՝ «Կրթության» բնագավառ՝ 148 տեղ, «Տնտեսագիտություն»՝ 42, «Կառավարում»՝ 49, «Ֆինանս-ներ»՝ 29, «Գյուղատնտեսական գիտություններ»՝ 14, «Դիզայն»՝ 19, «Բնական գիտություններ»-ի ոլորտ՝ 186, «Տեխնիկական գիտություններ»-ի ոլորտ՝ 191, «Իրավագիտություն»՝ 12, «Ճար-տարագիտություն»՝ 129, «Ար-վեստ»՝ 87, «Սերվիս»՝ 6, «Տեղեկատվական անվտանգ-ություն»՝ 16, «Զբոսաշրջություն»՝ 7 և «Լրագրություն»՝ 11 տեղ: Հարկ է նշել, որ այսուհետ հետազոտությունների արդյունք-ները կընդունվեն ի գիտություն և	Նախագիծը մնացել է անփոփոխ

	նախատեսված տեղերի թվաքանակի համապատասխանությունը հետազոտության արդյունքում վեր հանված համամասնությանը:	հաջորդ ուսումնական տարվա համար պահանջվող մասնագիտությունները և տեղերի քանակի բաշխումը կլինի նախարարության ուշադրության կենտրոնում:	
	3. Հաշվի առնելով սոցիալական պաշտպանության ոլորտում ընթացող բարեփոխումները՝ մասնավորապես սոցիալական դեպքի վարման ինստիտուտի ներդրումը, երեխաների խնամքի և դաստիարակության նոր մոդելների ներդրումը, այդ թվում պետություն-մասնավոր համագործակցության նոր մեխանիզմների ներդրումը և մատուցվող ծառայությունների որակի բարձրացման սկզբունքի ամրագրումը, կարճաժամկետ հեռանկարում կա անհրաժեշտություն, մասնավորապես սոցիալական աշխատողների ինստիտուտի մարդկային կարողությունների զարգացման գործադրումների, ինչը առաջին հերթին ենթադրում է նաև երիտասարդ ու բարձր ներուժ ունեցող աշխատողների ներգրավում: Այս առնչությամբ, առաջարկվում է «Սոցիոլոգ», «Սոցիալական աշխատանք», «Հոգեբանություն» և «Հատուկ մանկավարժություն» մասնագիտությունների գծով հատկացված ընդհանուր թվաքանակը՝ 44 անվճար տեղ, ավելացնել հասցնելով 60 տեղի:	3. Հարկ է նշել, որ լրացուցիչ տեղերի ավելացումը կբերի պետական բյուջեի ծախսերի ավելացման:	Նախագիծը մնացել է անփոփոխ
	4. Հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման գործում արդյունաբերության՝ հատկապես մեքենաշինության և մեքենագիտության կարևորությունը, ինչպես նաև ճարտարագիտության ոլորտում մասնագետների կարիքը՝ առաջարկվում է ավելացնել «Մեքենագիտություն» և «Մեքենաշինություն» մասնագիտությունների տեղերի թիվը՝ հատկացնելով հինգական տեղ:	4. Տեղերի ավելացումը կբերի մյուս մասնագիտությունների գծով տեղերի նվազմանը:Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Մեքենագիտություն» մասնագիտությանը հատկացվել է 3 տեղ, «Տրանսպորտային մեքենաշինություն» մասնագիտությանը՝ 4 տեղ: Առաջարկությունը հաշվի կառնվի հաջորդ ուսումնական տարում:	Նախագիծը մնացել է անփոփոխ
Ֆինանսների նախարարության ս/թ մարտի 13-ի հմ. 01/8-3/3765-2020 գրություն	-Անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ սկզբունքներով և մոտեցումներով են սահմանվում/ընտրվում և բաշխվում ընդունելության տեղերը ըստ շահառուների, այսինքն՝ թե ինչ մեթոդաբանությամբ է հաշվարկվում յուրաքանչյուր բուհին հատկացվելիք անվճար և վճարովի տեղերի քանակը, բացահայտել տեղերի բաշխման ամբողջ ընթացակարգը: Մասնավորապես	-Նախագծի հիմնավորման մեջ ներկայացված է մագիստրոսի կրթական ծրագրով տեղերի ձևավորման քաղաքականությունը: Հաշվի է առնվել նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերլուծությունը՝ թափուր աշխատատեղերի վերաբերյալ: Վճարո-	Նախագիծը մնացել է անփոփոխ

	այն պարագայում, երբ սահմանափակ ռեսուրսների առկայությամբ պայմանավորված՝ հայտերով ներկայացված պահանջվող տեղերի քանակը գերազանցում է ֆինանսավորման ենթակա տեղերի քանակին, անհասկանալի է, թե ինչ կարգով են որոշվում առաջնահերթությունները:	վի տեղերի քանակը որոշելիս հիմք է ընդունվում բուհի կողմից ներկայացրած հայտը և տվյալ մասնագիտությանը լիցենզիայով հատկացված տեղերի քանակը: Հարկ է նշել, որ մագիստրատուրայի և բակալավրիատի ընդունելության տեղերի համամասնական շարունակականությունն ապահովելու նպատակով մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության 40 տեղը հատկացվել է բակալավրի կրթական ծրագրով ընդունելությանը: Նշեմ նաև, որ ֆինանսավորման ենթակա տեղերի քանակի գերազանցումը պայմանավորված է Պաշտպանության նախարարության ներկայացրած հայտով: Ներկայացվել է 83 տեղ՝ նախորդ տարվա 25 տեղի փոխարեն, որից 53-ը՝ կհատկացվի ՀԱՊԿ անդամ երկրների ռազմաուսումնական հաստատություններին, իսկ 30 տեղ՝ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի «Միավորումների և զորամասերի կառավարում» մասնագիտությանը: Վերոնշյալ 83 տեղի ֆինանսավորումը կատարվում է Պաշտպանության նախարարության բյուջեի միջոցների հաշվին:	
	-Նախագծի հիմնավորմամբ հղում է կատարվում ՀՀ կառավարության 23.10.2014թ. N 1191-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկին, ինչպես նաև այն հանգամանքին, որ տեղերն ըստ մասնագիտությունների ձևավորելիս հաշվի են առնվել շահագրգիռ կազմակերպությունների և բուհերի կողմից ներկայացված հայտերը՝ նախապատվությունը տալով ճարտարագիտության, արդյունաբերության և տեխնոլոգիայի, ճարտարապետության և շինարարության, համակարգչային, ֆիզիկական, կենսաբանական գիտությունների, մաթեմատիկայի, գյուղատնտեսական գիտությունների ոլորտների մասնագիտու-	Մագիստրատուրայի տեղերը ձևավորելիս բուհերին առաջարկվել էր հաշվի առնել բակալավրիատի բարձր (գերազանց) առաջադիմությամբ շրջանավարտների քանակը, ինչպես նաև բուհի կարիերայի կենտրոնի վերլուծությունը՝ աշխատաշուկայում անհրաժեշտ մասնագետների պահանջարկի վերաբերյալ: Այս ցուցանիշների հիման վրա ձևավորվել են քանակական տվյալները: Տեղերը նախագծվել են ըստ բնագավառների և ոլորտների, օրինակ՝ Բնագիտական ոլորտի մասնագիտություններին՝(Մաթեմատիկա, Համակարգչային գիտություններ, Ֆիզիկական	Նախագիծը մնացել է անփոփոխ

	թյուններին և կրթական ծրագրերին, այնուհանդերձ, հստակեցված չէ, թե ինչպես են այս գործոնները քանակական գնահատման ենթարկվում և արդյոք ամրագրված են իրավական ակտով, թե ոչ: Այս կապակցությամբ գտնում ենք, որ բերված հիմնավորումները չեն կարող սպառիչ լինել ըստ մասնագիտությունների սահմանման/ընտրության և բաշխման մեխանիզմի կիրառման առումով, ուստի անհրաժեշտ է այս առումով ևս բավարար հիմնավորումներ ներկայացնել:	գիտություններ, Գիտություններ երկրի մասին և շրջակա միջավայր, Կենսաբանական գիտություններ) հատկացվել է 183 տեղ: Տեխնիկական գիտություններին՝ (Ճարտարագիտություն,Արդյունաբերություն և տեխնոլոգիա, Ճարտարապետություն և շինարարություն)՝ 189 տեղ, Բժշկական և առողջապահական գիտություններին՝ (Առողջապահական գիտություններ) 16 տեղ, Գյուղատնտեսական գիտություններին՝ (Գյուղատնտեսական գիտություններ, Անասնաբուժություն)՝ 18 տեղ և այլն:	
	-Նախագծի N2 հավելվածի 4-րդ և 5-րդ սյունակներում անհրաժեշտ է ճշգրտել ըստ բուհերի ընդունելության տեղերը, դրանով պայմանավորված ճշգրտում կատարելով N1,2 հավելվածներում և Նախագծի հիմնավորման մեջ:	Դիտողությունն ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
Պաշտպանության նախարարության ս/թ մարտի 13-ի հմ. ՊՆ/510/797-2020 գրությունը	Նախագծի քննարկման արդյունքներով հայտնում եմ, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ պաշտպանության նախարարության հայտով ներկայացված տեղերի վրա հեռակա ուսուցմամբ բարձրագույն մասնագիտական կրթությունը պետական պատվերի շրջանակներում չի կարող իրականացվել՝ առաջարկվում է հանել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացվող հետևյալ 6 տեղերը՝ ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)՝ 2 տեղ, տեղեկատվական անվտանգություն՝ 1 տեղ, տրանսպորտային համակարգեր՝ 1 տեղ և ավտոմատացում՝ 2 տեղ:	Դիտողությունն ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
Արդարադատության նախարարության ս/թ ապրիլի 10-ի հմ. 01/27.4/7822-2020 գրություն	Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:	-	Նախագիծը մնացել է անփոփոխ
Հանրային քննարկում 16.10.2020 մինչև 01.04.2020	Առաջարկում ենք նախագծում կատարել հետևյալ փոփոխությունները՝ 073101.00.7 Ճարտարապետություն 8-ը փոխարինել 15-ով 073102.00.7 Քաղաքային տնտեսություն	Առաջարկվում է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին հատկացված տեղերի	Նախագիծը մնացել է անփոփոխ

Քաղաքաշինություն և տնտեսություն ՀԿ	3-ը փոխարինել 5-ով 073201.00.7 Շինարարություն 15-ը փոխարինել 22-ով 031101.00.7 Տնտեսագիտություն 2-ը փոխարինել 5-ով Նոր իրողություններից ելնելով՝ պետք է խրախուսել ապագա մասնագետներին, որպեսզի հնարավորինս համալրենք այս մասնագիտությունների հանրությունը, որի առաջ դրված խնդիրները օր-օրի առավել խոցելի են դառնում: Պետք է հաշվի առնել նաև, որ << Տնտեսագիտություն>> մասնագիտությամբ պետք է կրթվեն շինարարության նախահաշիվներ կազմողները, որոնց կարիքը ներկայումս շատ է զգացվում:	քանակն ավելացնել ևս 19-ով, որն ընդունելի չէ, քանի որ անվճար ուսուցման տեղերի թիվը սահմանափակ է և լրացուցիչ տեղերի ավելացումը կբերի պետական բյուջեի ծախսերի ավելացման կամ մյուս մասնագիտությունների գծով տեղերի նվազեցման: Առաջարկությունը կքննարկվի և հաշվի կառնվի հաջորդ ուսումնական տարվա տեղերը նախագծելիս (բացի «Տնտեսագիտություն» մասնագիտությունից): Հարկ է նշել, որ ըստ մասնագիտությունների բուհերին անվճար տեղեր հատկացնելիս հաշվի է առնվել նաև բուհի մասնագիտական ուղղվածությունը: Տվյալ դեպքում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առաքելությունը տնտեսագիտության բնագավառում մասնագետների պատրաստումն է: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի առաքելությունը՝ ճարտարապետության, շինարարության, քաղաքային տնտեսության, դիզայնի, տեղեկատվական համակարգերի և հարակից ոլորտներում մասնագետների պատրաստումը: Նշեմ, որ «Տնտեսագիտություն» մասնագիտությանը հատկացվել է 42 անվճար տեղ: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի «Տնտեսագիտություն» մասնագիտությանը կհատկացվեն նաև վճարովի ուսուցման տեղեր:	

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020/2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին

Ներկայացվող «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020/2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020/2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեի ծախսերի կամ եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին

Ներկայացվող «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020/2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական կամ տեղական բյուջեում եկամուտների կամ ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսում:

Մագիստրատուրայի ընդունելության անհրաժեշտ ծախսերը կատարվելու են Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի միջոցների հաշվին: